

ՄԻՆԻ ԿԱՍԿՈ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻՆԻ ԿԱՍԿՈ» ապահովագրատեսակը ցամաքային տրանսպորտային միջոցների կամավոր ապահովագրություն է, որը նախատեսված է միայն 1-16 ԲՄ դաս ունեցող ֆիզիկական անձանց համար:

Ապահովագրության ենթակա են միայն ՀՀ-ում գրանցված անձնական օգտագործման մարդատար տրանսպորտային միջոցները:

2. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱՆ ՉԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

- էքսկյուզիվ
- սպորտային
- որպես տաքսի շահագործվող
- որպես վարձակալություն շահագործվող
- որպես ուսումնական շահագործվող

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՏՄ-ՆԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՏԱՐԵԹԻՎ

8-18 տարեկան

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

- ՃՏՊ
- Հրդեհ, պայթյուն
- Թռչող առարկաների վայր ընկնում
- Տարերային աղետներ
- Բախում, հարված



5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

- 1 Տարի

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 1.000.000 ՀՀ դրամ
- 1.500.000 ՀՀ դրամ

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Բազային սակագին 4% * գործակից կախված շարժիչի հզորությունից ու ԲՄ դասից:
Նվազագույն ապահովագրավճարը կկազմի 40.000 ՀՀ դրամ:

Շարժիչի հզորություն	Կարգավորիչ գործակից
Մինչև 80 ձ/ու	1.05
81 – 140 ձ/ու	1.15
141 – 230 ձ/ու	1.2
231-ից ավել ձ/ու	1.3

ԲՄ դաս	Կարգավորիչ գործակից
1 - 5	0.9
6 - 10	1
11 - 12	1.1
13 - 16	1.15



ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ

Օրինակ 1

- Ապահովագրվող մեքենա – Toyota Camry, 2013թ արտադրության
- Ապահովադրի ԲՄ դաս – 2
- ՏՄ ձիաուժ – 178

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1.000.000 * 4\% * 1,2 * 0,9 = 43,200$ ՀՀ դրամ

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1.500.000 * 4\% * 1,2 * 0,9 = 64,800$ ՀՀ դրամ

Օրինակ 2

- Ապահովագրվող մեքենա – Nissan Sunny, 2007 արտադրության,
- Ապահովադրի ԲՄ դաս – 14
- ՏՄ ձիաուժ – 116

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1.000.000 * 4\% * 1,15 * 1,15 = 52,900$ ՀՀ դրամ

Կասկո տարեկան ապահովագրավճարը = $1.500.000 * 4\% * 1,15 * 1,15 = 79,350$ ՀՀ դրամ

8. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

- Չի կիրառվում

9. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴՆԵՐ

- 23 տարեկանից բարձր, 3 տարվա վարորդական փորձ ունեցող վարորդներ
- Առավելագույնը 4 վարորդ
- Լրավճարով հնարավոր է ներառել 1-3 տարվա վարորդական փորձ ունեցող 1 վարորդ

10. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- ՀՀ
- Հնարավոր է ծածկույթի ընդլայնում 30% հավելավճարով վկայագրի կնքման պահին



11. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԻՍԿԵՐ

- Վարորդի և ուղևորների ապահովագրություն դժբախտ պատահարներից

12. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Տրանսպորտային միջոցի տեխնիկական անձնագիր
- Սեփականատիրոջ և լիազորված վարորդների անձնագիր կամ նույնականացման քարտ
- Վարորդների վարորդական վկայականներ

Ուշադրություն - Մինչ պայմանագրի կնքումը կատարվում է մեքենայի զննություն:

13. ԱՊԱՀՈՎԱԴԻՐ/ՇԱՀԱՌՈՒԻ/ԼԻԱԶՈՐՎԱԾ ՎԱՐՈՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պարտավոր է՝

- Չտեղաշարժել տրանսպորտային միջոցը
- Չընդունել որևէ պատասխանատվությունը
- Անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում, տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին՝ վկայագրում նշված հեռախոսահամարով:
- Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը ապահովագրական պատահարի արդյունքում գտնվել է անգիտակից վիճակում: Անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը/Շահառուն/Լիազորված տիրապետողը պարտավոր է անհապաղ՝ ոչ ուշ քան 40 րոպեի ընթացքում տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին:



ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ/ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

- Ֆիզիկական վնասվածք (հաշմություն) ՃՏՊ արդյունքում: Հատուցումն իրականացվում է համաձայն Դժբախտ պատահարներից ապահովագրության Պայմանների աղյուսակ 2-ի
- I, II, խմբի հաշմանդամություն ՃՏՊ-ի արդյունքում
- Մահ ՃՏՊ-ի արդյունքում

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- 2.500.000 ՀՀ դրամ՝ առավելագույնը 5 նստատեղ, յուրաքանչյուր նստատեղի համար 500.000 ՀՀ դրամ:

3. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

- Չի կիրառվում

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- 5.000 ՀՀ դրամ



ՄԵՔԵՆԱՅԻ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ/ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

- Էվակուատորի ծառայություն
- Շարժական վնասվածքներ/անվադողերի վերանորոգում
- Մարտկոցի սնուցում
- Բենզինի առաքում

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

- Հատուցման առավելագույն սահմանաչափ՝ 300.000 ՀՀ դրամ:

3. ՈՉ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ

- Չի կիրառվում

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

- 5.000 ՀՀ դրամ

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

Երևան քաղաքում և հարակից մարզերում՝ Արարատ, Արմավիր, Արագածոտն, Կոտայք

